ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՍԱՐՔԵՐԻ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-ՀՍՊ-20/1.1

ք. Երևան

«18» դեկտեմբերի 2019թ.

ՀՀ քննչական կոմիտեն, ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա.Նիկոյանի, որը գործում է դեպարտամենտի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և Ա/Ձ Անուշ Պետրոսյան, ի դեմս տնօրեն Ա. Պետրոսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **սարքերի եվ սարքավորումների սպասարկման** ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը:՝ Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը՝ ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն՝ ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **4000000 (չորս միլիոն)** ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների՝ փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Սարքերի և սարքավորումների վերանորոգման ծառայությունների դեպքում,մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.

Ք-ն մատուցված ծառայության քանակն է:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[22] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու՝ վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու՝ մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ քննչական կոմիտե
ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5
ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն,
Հ/Հ 900011000834
ՀԿՀՀ 02631263

_____
(ստորագրություն)

Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

Ա/Ձ Անուշ Պետրոսյան
ք.Երևան. Արշակունյաց 5
«Կոնվերսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930041213670100
ՀԿՀՀ 49557658
Էլ. Հասցե ga-c@mail.ru
Հեռ. 010 56 90 96

_____
(ստորագրություն)

Կ.Տ

Հավելված N 1
« 13 » դեկտեմբերի 2019 թ. կնքված
ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-ՀՍՊ-20/1.1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Ծառայության տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	մատուցման	
					հասցե	Ժամկետը
1	50311120/501	համակարգչային սարքերի պահպանման " վերանորոգման ծառայություններ	դրամ	1500000	Ք.Երևան, Մամիկոնյանց 46/5, Պարույր Սևակի 4, Իսակովի 9, Բաբայան 6, Մովսես Խորենացի 162, Վրացյան 90, Շինարարների 10/01, Նորքի 1-ին զանգված, Բորյան 1, Կոմիտասի 51ա Ահարոնյան 3, Գ.Նժդեհի 27, Ա.Սարգսյան 22, Ք.Երևան, Մամիկոնյանց 46/5, Պարույր Սևակի 4, Իսակովի 9, Բաբայան 6, Մովսես Խորենացի 162, Վրացյան 90, Շինարարների 10/01, Նորքի 1-ին զանգված, Բորյան 1, Կոմիտասի 51ա Ահարոնյան 3, Գ.Նժդեհի 27, Ա.Սարգսյան 22,	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած մինչև 2020թ.-ի դեկտեմբերի 25
2	50311240/501	պատճենահանող սարքերի վերանորոգման ծառայություններ	դրամ	2500000		

1 - չափաբաժին Համակարգչային սարքերի պահպանման – վերանորոգման ծառայություններ	/ՀՀ դրամ/
Համակարգչի	
Պրոֆիլակտիկա	2000
Սնուցման բլոկի վերանորոգում	2000
Սնուցման բլոկի փոխարինում / 550վ/ ներառյալ սնուցման բլոկը 550վ	8000
BIOS -ի վերածրագրավորում	3000
CPU-ի փոխարինում ներառյալ CPU Intel core i5 4460	80000
CPU-ի փոխարինում ներառյալ CPU Intel core i5 3340	50000
CPU-ի հովացուցիչի փոխարինում ներառյալ հովացուցիչը	3000
Համակարգչի մայրական տպասալի նորոգում	5000
Համակարգչի մայրական տպասալի փոխարինում /ներառյալ մայր պլատան/	30000
RAM փոխարինում ներառյալ ԴԴՌ2 2048Մբ 667/800ՄՀՑ (DDR2 2048Mb 667/800MHZ)	6000
RAM փոխարինում ներառյալ ԴԴՌ3 2048Մբ 1600ՄՀՑ (DDR3 2048Mb 1600MHZ)	6000
RAM փոխարինում ներառյալ ԴԴՌ3 4096Մբ 1600ՄՀՑ (DDR3 4096Mb 1600MHZ)	12000
RAM փոխարինում ներառյալ ԴԴՌ4 4Գբ 2400ՄՀՑ (DDR4 4GB 2400Mhz)	12000
RAM փոխարինում ներառյալ ԴԴՌ4 8Գբ 2400ՄՀՑ (DDR4 8GB 2400Mhz)	16000
SVGA փոխարինում ներառյալ Ատի Ռադեոն 1Գբ ՊիՍիԱյ-էքսպ(Ati Radeon 1Gb PCI Exp) կամ համարժեքը	20000
HDD փոխարինում ներառյալ 500ԳԲ, 7200ռպմ,SATA	20000
HDD փոխարինում ներառյալ 1Տբ, 7200ռպմ,SATA	22000
DVD-RW փոխարինում ներառյալ ԴՎԴ-ՌՎ(DVD-RW), կամ համարժեքը	9000
Ցանցային քարտի տեղադրում /ներառյալ ցանցային քարտը/	4000
Անխափան սնուցման սարք HP R1500 G3 INTL	
Դիագնոստիկա	2000
Պրոֆիլակտիկա	3000
Ղեկավարման պլատայի վերանորոգում	10000
Մարտկոցների հավաքածուի փոխարինում, ներառյալ մարտկոցները	60000
Անխափան սնուցման սարք HP R5000 INTL	
Դիագնոստիկա	2000
Պրոֆիլակտիկա	3000
Ղեկավարման պլատայի վերանորոգում	20000
Մարտկոցների հավաքածուի փոխարինում, ներառյալ մարտկոցները	150000
Անխափան սնուցման սարք 500- 2000VA	
Դիագնոստիկա	1000
Ղեկավարման պլատայի վերանորոգում	5000
Մարտկոցի փոխարինում, ներառյալ մարտկոցը (12V-7.5 Ah)	7000
Մարտկոցի փոխարինում, ներառյալ մարտկոցը (12V-5 Ah)	8000
Մարտկոցի փոխարինում, ներառյալ մարտկոցը (12V-9 Ah)	12000
Մարտկոցի փոխարինում, ներառյալ մարտկոցը (12V-17 Ah)	24000
Սերվեր HP proliant DL180 Gen9	
Դիագնոստիկա	1000
Պրոֆիլակտիկա	3000

Սնուցման բլոկի վերանորոգում	8000
Սնուցման բլոկի փոխարինում	220000
Մայր պլատայի վերանորոգում	15000
Ջնջված ֆայլերի վերականգնում	10000
Կոշտ սկավառակի փոխարինում ներառյալ HDD 2Tb SATA 7200 RPM	40000
Օպերատիվ հիշողության փոխարինում ներառյալ օպերատիվ հիշողություն 16Gb DDR4 2133 Mhz	60000
Windows Server 2012 R2 օպերացիոն համակարգի արտոնագրված ակտիվացիայի տեղադրում	110000
Սերվեր DELL PowerEdge R730xd	
Դիագնոստիկա	1000
Պրոֆիլակտիկա	3000
Սնուցման բլոկի վերանորոգում	8000
Սնուցման բլոկի փոխարինում	160000
Մայր պլատայի վերանորոգում	15000
Ջնջված ֆայլերի վերականգնում	10000
Կոշտ սկավառակի փոխարինում ներառյալ HDD 2Tb SAS 7200 RPM Serial Attached SCSI (SAS 2) 12Gb/sec 2.5-inch	90000
Օպերատիվ հիշողության փոխարինում ներառյալ օպերատիվ հիշողություն 32Gb DDR4 2400 Mhz	80000
Սերվեր HP Proliant ML350P Gen8	
Դիագնոստիկա	1000
Պրոֆիլակտիկա	3000
Սնուցման բլոկի վերանորոգում	8000
Սնուցման բլոկի փոխարինում	50000
Մայր պլատայի վերանորոգում	15000
Ջնջված ֆայլերի վերականգնում	10000
Կոշտ սկավառակի փոխարինում ներառյալ 300Gb 10K SAS 2.5 Inch, 6Gb/sec	80000
Մոնիտոր	
ԼՍԴ լամպի (17") փոխարինում նորով	4000
ԼՍԴ լամպի (19") փոխարինում նորով	5000
ԼՍԴ լամպի (22") փոխարինում նորով	6000
Մատրիցայի փոխարինում նորով	25000
Մնուցման բլոկի վերանորոգում	3000
Սնուցման բլոկի փոխարինում նորով	8000
Վերանորոգում (վնասված մասերի փոխարինում)	4000
Ցանցային սարքավորումների	
HP 1910-48 48 տեղանոց Սվիչների դիադնոստիկա	1000
HP 1910-48 48 տեղանոց Սվիչների վերանորոգում	10000
HP 1910-48 48 տեղանոց Սվիչների փոխարինում նորով	160000
Դյուրակիր համակարգիչների	
Դիագնոստիկա	1000
Պրոֆիլակտիկա	2000
մայրական տպասալի նորոգում	8000

մայրական տպասալի փոխարինում նորով /ներառյալ մայր պլատան/	25000
BIOS -ի վերածրագրավորում	4000
Սնուցման բլոկի վերանորոգում	2000
Սնուցման բլոկի փոխարինում նորով ներառյալ բլոկը	8000
Օպերատիվ հիշողություն RAM DDR3 2GB -ի փոխարինում ներառյալ RAM-ը	4000
Օպերատիվ հիշողություն RAM DDR3 4GB -ի փոխարինում ներառյալ RAM-ը	9000
Կոշտ սկավառակ HDD 500GB 2.5 Inch, 7200 RPM SATA III-ի փոխարինում ներառյալ կոշտ սկավառակը	16000
Կոշտ սկավառակ HDD 1TB 2.5 Inch, 7200 RPM SATA III-ի փոխարինում ներառյալ կոշտ սկավառակը	18000
Մատրցայի փոխարինում նորով ներառյալ մատրիցան	25000
Մարտկոցի փոխարինում նորով ներառյալ մարտկոցը	18000
DVD-RW փոխարինում նորով ներառյալ ԴՎԴ-ՌՎ(DVD-RW),	7000
Տեսահսկման համակարգերի	
Տեսախցիկների վերանորոգում	3000
Տեսախցիկների փոխաինում նորով	15000
Տեսախցիկների սնուցման բլոկի վերանորոգում	3000
Տեսախցիկների սնուցման բլոկի փոխարինում նորով 12V/30A	15000
Տեսաձայնագրիչի վերանորոգում	6000
Տեսաձայնագրիչի փոխարինում նորով 16 տեղանոց	35000
Տեսաձայնագրիչի փոխարինում նորով 8 տեղանոց	25000
Տեսաձայնագրիչի սնուցման բլոկի փոխարինում նորով	5000
Տեսաձայնագրիչի կոշտ սկավառակի փոխարինում նորով 2Tb NAS HDD SATA3 up to 6.0Gb/s (for 24/7 work)	48000
Ավտոմատ հեռախոսային կայանների (ԱՀԿ)	
Դիագնոստիկա	2000
Պրոֆիլակտիկա	3000
Սնուցման բլոկի վերանորոգում	8000
Սնուցման բլոկի փոխարինում	30000
Պլատայի վերանորոգում	15000
2 - չափաբաժին Պատճենահանող սարքերի վերանորոգման ծառայություններ	
Canon LBP 6300/6310/ MF 6140/ HP P2055 մոդելի լազերային տպիչների	
Դիագնոստիկա	1000
Պրոֆիլակտիկա	2000
Քարթրիջի լիցքավորում ներառյալ տոները և պահեստամասերը	4000
Վերանորոգում, վնասված մասերի փոխարինում	6000
Վառարանի թերմոթաղանթի փոխարինում նորով	5000
Մայր պլատաի (formator) փոխարինում նորով	15000
Թղթի մատուցման ռետինե լիսեռի փոխարինում նորով	2000
Canon MF 4410/4430/4570/4730/4870dn մոդելի լազերային տպիչների	
Դիագնոստիկա	1000
Պրոֆիլակտիկա	2000
Քարթրիջի լիցքավորում ներառյալ տոները և պահեստամասերը	2000
Վերանորոգում, վնասված մասերի փոխարինում	6000

Վառարանի թերմոթաղանթի փոխարինում նորով	5000
Մայր պլատաի (formator) փոխարինում նորով	15000
Թղթի մատուցման ռետինե լիսեռի փոխարինում նորով	2000
Canon iR 2202 Պատճենահանող սարքի	
Դիագնոստիկա	1000
Լիցքավորում	6000
Պրոֆիլակտիկա	3000
Թմբուկի փոխարինում	5000
Ռետինե լիսեռի փոխարինում նորով	8000
Կարատրոնի փոխարինում նորով	5000
Մաքրող դանակի փոխարինում նորով	3000
Վառարանի թերմոթաղանթի փոխարինում նորով	10000
Վերանորոգում	10000
Canon iR 1020 Պատճենահանող սարքի	
Դիագնոստիկա	1000
Լիցքավորում	6000
Պրոֆիլակտիկա	3000
Թմբուկի փոխարինում	5000
Վառարանի թերմոթաղանթի փոխարինում նորով	8000
Ռետինե լիսեռի փոխարինում նորով	6000
Կարատրոնի փոխարինում նորով	6000
Մաքրող դանակի փոխարինում նորով	3000
Թղթի մատուցման ռետինե լիսեռի փոխարինում նորով	4000
Վերանորոգում	10000
Canon MF 3110/3228 մոդելի լազերային տպիչի	
Դիագնոստիկա	1000
Պրոֆիլակտիկա	2000
Քարթրիջի լիցքավորում ներառյալ տոները և պահեստամասերը	3000
Վառարանի թերմոթաղանթի փոխարինում նորով	4000
Մայր պլատաի (formator) փոխարինում նորով	15000
Ռետինե լիսեռի փոխարինում նորով	4000
Թղթի մատուցման ռետինե լիսեռի փոխարինում նորով	2000
Վերանորոգում վնասված մասերի փոխարինում	8000
Canon MF 3010 մոդելի լազերային տպիչի	
Դիագնոստիկա	1000
Պրոֆիլակտիկա	2000
Քարթրիջի լիցքավորում ներառյալ տոները և պահեստամասերը	2000
Վառարանի թերմոթաղանթի փոխարինում նորով	4000
Մայր պլատաի (formator) փոխարինում նորով	15000
Ռետինե լիսեռի փոխարինում նորով	3000
Թղթի մատուցման ռետինե լիսեռի փոխարինում նորով	2000
Վերանորոգում վնասված մասերի փոխարինում	8000
Canon MF 4010/4018 մոդելի լազերային տպիչի	
Դիագնոստիկա	1000
Պրոֆիլակտիկա	2000

Քարթրիջի լիցքավորում ներառյալ տոները և պահեստամասերը	2000
Վառարանի թերմոթաղանթի փոխարինում նորով	4000
Մայր պլատաի (formator) փոխարինում նորով	15000
Ռետինե լիսեռի փոխարինում նորով	3000
Թղթի մատուցման ռետինե լիսեռի փոխարինում նորով	2000
Վերանորոգում վնասված մասերի փոխարինում	6000
HP LserJet 1010/1018/1020/1005/ M1005MFP մոդելի լազերային տպիչների	
Դիագնոստիկա	1000
Պրոֆիլակտիկա	2000
Քարթրիջի լիցքավորում ներառյալ տոները և պահեստամասերը	2000
Վառարանի թերմոթաղանթի փոխարինում նորով	4000
Մայր պլատաի (formator) փոխարինում նորով	15000
Ռետինե լիսեռի փոխարինում նորով	3000
Թղթի մատուցման ռետինե լիսեռի փոխարինում նորով	2000
Վերանորոգում վնասված մասերի փոխարինում	6000
RICOH SP 200s մոդելի լազերային տպիչի	
Դիագնոստիկա	1000
Պրոֆիլակտիկա	2000
Քարթրիջի լիցքավորում ներառյալ տոները, Չիպը և պահեստամասերը	4000
Վառարանի թերմոթաղանթի փոխարինում նորով	5000
Մայր պլատաի (formator) փոխարինում նորով	18000
Ռետինե լիսեռի փոխարինում նորով	3000
Թղթի մատուցման ռետինե լիսեռի փոխարինում նորով	2000
Վերանորոգում վնասված մասերի փոխարինում	8000
Samsung SL-M2020/M1660/SCX3400/SCX4300 մոդելի լազերային տպիչների	
Դիագնոստիկա	1000
Պրոֆիլակտիկա	2000
Քարթրիջի լիցքավորում ներառյալ տոները, Չիպը և պահեստամասերը	3000
Վառարանի թերմոթաղանթի փոխարինում նորով	5000
Մայր պլատաի (formator) փոխարինում նորով	20000
Ռետինե լիսեռի փոխարինում նորով	3000
Թղթի մատուցման ռետինե լիսեռի փոխարինում նորով	2000
Վերանորոգում վնասված մասերի փոխարինում	6000
Xerox Phaser 3020/3010 մոդելի լազերային տպիչի	
Դիագնոստիկա	1000
Պրոֆիլակտիկա	2000
Քարթրիջի լիցքավորում ներառյալ տոները, Չիպը և պահեստամասերը	2000
Վառարանի թերմոթաղանթի փոխարինում նորով	4000
Մայր պլատաի (formator) փոխարինում նորով	20000
Ռետինե լիսեռի փոխարինում նորով	3000
Թղթի մատուցման ռետինե լիսեռի փոխարինում նորով	2000
Վերանորոգում վնասված մասերի փոխարինում	6000

Canon LBP 6000//6030/3010/3100/1210 մոդելի լազերային տպիչների	
Դիագնոստիկա	1000
Պրոֆիլակտիկա	2000
Քարթրիջի լիցքավորում ներառյալ տոները, Չիպը և պահեստամասերը	2000
Վառարանի թերմոթաղանթի փոխարինում նորով	4000
Մայր պլատաի (formator) փոխարինում նորով	20000
Ռետինե լիսեռի փոխարինում նորով	3000
Թղթի մատուցման ռետինե լիսեռի փոխարինում նորով	2000
Վերանորոգում վնասված մասերի փոխարինում	6000
HP 630dn մոդելի պատճենահանման սարք	
Դիագնոստիկա	2000
Պրոֆիլակտիկա	6000
Թմբուկի փոխարինում	4000
Քարթրիջի լիցքավորում ներառյալ տոները պահեստամասերը	4000
Կոշտ սկավառակի փոխարինում նորով 320ԳԲ 2.5"	15000
Վերևից քաշող մեխանիզմի (ADF) նորոգում	10000
Վառարանի թերմոթաղանթի փոխարինում նորով	10000
Վառարանի նորոգում	15000
Վառարանի փոխարինում նորով	120000
Մայր պլատաի (formator) փոխարինում նորով	160000
Վերանորոգում վնասված մասերի փոխարինում	15000
Թղթի մատուցման ռետինե լիսեռի փոխարինում նորով	5000
XEROX WC 3655 մոդելի պատճենահանման սարք	
Դիագնոստիկա	2000
Պրոֆիլակտիկա	5000
Թմբուկի փոխարինում	15000
Վերևից քաշող մեխանիզմի (ADF) նորոգում	15000
Թմբուկի բլոկի փոխարինում (Drum Unit)	70000
Քարթրիջի լիցքավորում / չիպի զրոյացում, կամ չիպի փոխարինում	25000
Կոշտ սկավառակի փոխարինում նորով 320ԳԲ 2.5"	15000
Վառարանի թերմոթաղանթի փոխարինում նորով	25000
Մայր պլատաի (formator) փոխարինում նորով	150000
Թղթի մատուցման ռետինե լիսեռի փոխարինում նորով	5000
Հոսանքի բլոկի նորոգում	8000
պլատայի վերանորոգում	8000
Ընդհանուր Վերանորոգում վնասված մասերի փոխարինում	15000
HP LaserJet Pro 100 color MFP M175	
Դիագնոստիկա	1000
Պրոֆիլակտիկա	2000
Թմբուկի փոխարինում	4000

	Քարթրիջի լիցքավորում / չիպի զրոյացում, կամ չիպի փոխարինում	5000
	Վերևից քաշող մեխանիզմի (ADF) նորոգում	5000
	Վերանորոգում վնասված մասերի փոխարինում	10000
	Թղթի մատուցման ռետինե լիսեռի փոխարինում նորով	2000
	HP LaserJet Pro M130a/M28a/M102	
	Դիագնոստիկա	1000
	Պրոֆիլակտիկա	2000
	Քարթրիջի լիցքավորում / չիպի զրոյացում, կամ չիպի փոխարինում	3000
	Քարթրիջի փոխարինում նորով	7000
	Վառարանի թերմոթաղանթի փոխարինում նորով	8000
	Թմբուկի փոխարինում	3000
	Թմբուկի բլոկի փոխարինում (Drum Unit)	8000
	Թղթի մատուցման ռետինե լիսեռի փոխարինում նորով	2000
	Վերանորոգում վնասված մասերի փոխարինում	8000
	Toshiba e-studio 7506AC գունավոր բազմաֆունկցիոնալ սարք	
	Դիագնոստիկա	2000
	Պրոֆիլակտիկա	10000
	Քարթրիջի փոխարինում նորով սև օրիգինալ	130000
	Քարթրիջի փոխարինում նորով գունավոր օրիգինալ	140000
	Վառարանի վերանորոգում	20000
	Վառարանի փոխարինում նորով	250000
	Թմբուկի փոխարինում	25000
	Թմբուկի բլոկի փոխարինում (Drum Unit)	150000
	Թղթի մատուցման ռետինե լիսեռի փոխարինում նորով	8000
	Վերևից քաշող մեխանիզմի (ADF) նորոգում	18000
	Հոսանքի բլոկի նորոգում	10000
	Կոշտ սկավառակի փոխարինում նորով 320ԳԲ 2.5"	15000
	Սկաների	
	Դիագնոստիկա	1000
	վերանորոգում	8000
	սկաների լամպի փոխարինում A4	15000
	սկաների լամպի փոխարինում A3	25000
	Թուղթ աղացող սարքի	
	դիագնոստիկա	1000
	Վերանորոգում	8000

* Սարքերի և սարքավորումների տեղափոխումը իրականացնում է Կատարողը:
** Փոխարինվող պահեստամասերը և լիցքավորման տոները տրամադրվում է Կատարողի կողմից:
*** Քարթրիջի լիցքավորումը իրականացվում է ըստ պահանջի՝ իր ծավալի առավելագույն չափով և մեկ աշխատանքային օրվա ընթացքում:
**** Սարքերի և սարքավորումների սպասարկումը իրականացվում է պատվիրատուի կողմից պահանջ ներկայացնելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ քննչական կոմիտե
ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5
ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն,
Հ/Հ 900011000834
ՀՎՀՀ 02631263

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
Ա/Ձ Անուշ Պետրոսյան
ք.Երևան. Արշակունյաց 5
«Կոնվերսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930041213670100
ՀՎՀՀ 49557658
Էլ. Հասցե ga-c@mail.ru
Հեռ. 010 56 90 96

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 2
« 18 » դեկտեմբերի 2019 թ. կնքված
ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-ՀՍՊ-20/1.1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ծառայության դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 20 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	50311120/501	համակարգչային սարքերի պահպանման " վերանորոգման ծառայություններ	%	%	%	%	%	%	%	%	%	%	%	%	%
2	50311240/501	պատճենահանող սարքերի վերանորոգման ծառայություններ	%	%	%	%	%	%	%	%	%	%	%	%	%

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ քննչական կոմիտե
ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5
ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն,
Հ/Հ 900011000834
ՀՎՀՀ 02631263
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
Ա/Ձ Անուշ Պետրոսյան
ք.Երևան. Արշակունյաց 5
«Կոնվերսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930041213670100
ՀՎՀՀ 49557658
Էլ. Հասցե ga-c@mail.ru
Հեռ. 010 56 90 96
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 3
« 18 » դեկտեմբերի 2019 թ. կնքված
ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-ՀՍՊ-20/1.1 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ

_____

_____

գտնվելու վայրը _____
հհ _____
հվհհ _____

Պատվիրատու

_____

_____

գտնվելու վայրը _____
հհ_____
հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Հավելված 3.1
« 18 » դեկտեմբերի 2019 թ. կնքված
ՀՀՔԿ-ԳՀՇՁԲ-ՀՍՊ-20/1.1 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն